ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 17

06-0033-0026-0009 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԱՆԱՍՆԱԳՈՄԻ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Գրիգորյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 04.04.1991թ. թիվ 2 որոշումը, <<Արսեն Իսահակյան Ռուդիկի>> ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42-րդ հոդվածը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 18/05/2006թ. Թիվ 912-Ն օրենքի 8-22 հոդվածներով ,ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ ՀՕ 50-Ն որոշման 1-3 հոդվածներով
Որոշում եմ.

1.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-0033-0026-0009 ծածկագրի տակ գտնվող 0.05605 հա բնակելի կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1978թ. կառուցված 52.91ք.մ. մակերեսով բնակելի տան, 1978թ. կառուցված 36.22ք.մ. մակերեսով բնակելի տան, 1978թ. կառուցված 25.22ք.մ. մակերեսով անասնագոմի և 2010թ. ինքնակամ կառուցված 29.80 ք.մ. մակերեսով բնակելի տան նկատմամբ Սամվել Տիգրանի Գրիգորյանի /ծնվ.1973թ./, Մանվել Տիգրանի Գրիգորյանի /ծնվ.1975թ./, Ծաղիկ Վաղարշակի Ջեյրոյանի /ծնվ. 1942թ./, Տիգրան Գրիգորի Ջեյրոյանի /մահացած 1997թ./ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
2.Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3.Դարպաս համայնքի 06-033-0026-0009 ծածկագրում գտնվող Սամվել Տիգրանի Գրիգորյանի /ծնվ. 1973թ./, Մանվել Տիգրանի Գրիգորյանի /ծնվ.1975թ./, Ծաղիկ Վաղարշակի Ջեյրոյանի /ծնվ. 1942թ./, Տիգրան Գրիգորի Ջեյրոյանի / մահացած 1997թ./ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0,05605 հա բնակելի կառուցապատման հողամասի վրա կառուցված, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, 2010թ-ին կառուցված 29.80քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ օրենքի ուժով ճանաչել համատեղ սեփականության իրավունքը:
4.Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 38740 /երեսունութ հազար յոթ հարյուր քառասուն/ ՀՀ դրամ 30-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ 3 փող.,1 նրբ., 4 տուն:
7.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռիի մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 18

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ 06-033-0035-0012 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՐՎԱՐԴ ՊԱՐՈՒՅՐԻ ՂԵՎՈՆԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սիրվարդ Պարույրի Ղևոնդյանի դիմումը, «Արսեն Իսահակյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունն ու տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի 06-033-0035-0012 ծածկագրում առկա է բնակելի տան կառուցման և սպասարկման համար սահմանազատված 0.02827 հա մակերեսով հողամաս, դրա վրա առկա է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության 50.72 քմ շինություն, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, նշված անշարժ գույքի նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և հողհատկացման հիմքերը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով, ՀՀ ՀՕ 50-Ն որոշման 1-3 հոդվածներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով
Որոշում եմ.

1. Ճանաչել Սիրվարդ Պարույրի Ղևոնդյանի /ծնվ. 1957թ./ սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի 06-033-0035-0012 ծածկագրում գտնվող 0.02827հա հողամասի և նույն հողամասի վրա գտնվող 50,72 քմ բնակելի տան նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4.Անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Դարպաս համայնք 2 -րդ փող, 7-րդ նրբ. 58 բնակելի տուն:
5.Ուժը կորցրած ճանաչել Դարպաս համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 25.01.2021թ. թիվ 14 որոշումը:
6.Դիմել Կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը սեփակա-նության իրավունքը գրանցելու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**